# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-2

ք.Երևան «25» «07» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քոնստրաքշն Գրուպ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հակոբ Վարդանյանի, որը համատեղ գործունեության կարգով գործում է Պրեմիում Շին ՍՊԸ-ի հետ, ինչպես նաև գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 29.05.2023թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 06.07.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1107-Ն որոշումը, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N3 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

1.3 Քանի որ Կապալառու կազմակերպությունը հրաժարվում է Պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված կանխավճարից, ուստի նշված կետը դադարում է գործել:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**
«Քոնստրաքշն Գրուպ» ՍՊԸ, որը համատեղ գործունեության կարգով գործում է Պրեմիում Շին ՍՊԸ-ի հետ
Ք. Արտաշատ, Շահումյան փ. 12/21
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220013334580000
ՀՎՀՀ 04235059

Տնօրեն՝
Հ.Վարդանյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«25» «07» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/4-2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 3 | 45611300/504 3 | ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերի տանիքների վերանորոգման և թվով չորս դիտաշտարակների կառուցման աշխատանքներ | - | - | 22.720.000 | 56.562.000 | 56.562.000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Քոնստրաքշն Գրուպ» ՍՊԸ, որը համատեղ գործունեության կարգով գործում է Պրեմիում Շին ՍՊԸ-ի հետ
Ք. Արտաշատ, Շահումյան փ. 12/21
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220013334580000
ՀՎՀՀ 04235059

Տնօրեն՝
Հ.Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ